սէր երեխաներին: Մայրս այդ մասին ոչինչ չպատասխանեց, միայն հարցրուց, արդեօք վախեցաւ՞ նա, որ այնպիսի մթին եւ վատ եղանակում մեր տունը եկաւ:

— Ինչի՞ց պիտի վախենամ, — ասաց նա մի առանձին հպարտութեամբ, — գայլ չկայ, սատանայ չկայ, բոլորը ցրտից փախել, մտել են իրանց ծակերը: Ես խօ Մարիամը չեմ. որ վախենամ: Ու՛հ, սատկած, հիմա կը քնե՞ն: Տես, ինչպէ՞ս քնել է, մտիկ տու՛ր, Ֆարհատ, մտիկ տուր, հարսի...

Վերջին խօսքերի միջոցին Մարօն այնպիսի մի հեգնական ծամածռութիւն գործեց իր սեւուկ դէմքի վրայ, որ չէր կարելի առանց ծիծաղելու նրա երեսին նայել: Բայց յանկարծ նրա մեծ եւ գեղեցիկ աչքերը վառոեցան, նա դուրս թռաւ մօրս գրկից եւ վազեց մահճի մօտ, ուր քնած էին քոյրերս: Նա խոնարհոեցաւ, համբուրեց Մագթաղի երեսը, բայց Մարիամի մազերից այնպէս սաստիկ ձիգ տուաւ, որ խեղճ աղջիկը ծոաց, սարսափելով քնած տեղից վեր թռաւ, եւ տեսնելով իր ոխերիմը կշտին նստած, գոչեց վրդովուած ձայնով:

— Տօ, սեւ սատանայ, այստեղ ի՞նչ ես շինում:

Դեռ քնաթաթախ Մարիամը ջանք արեց, որ նրան բռնէ, վրէժը առնէ, բայց վայրենի Մարոյի ճարպիկ մատները պինդ սեղմոեցան նրա կոկորդին եւ շնչասպառ աղջիկը գլորոեցաւ բարձի վրայ: Ես մօտ վազեցի, որ ազատեմ քրոջս: Նոյն միջոցին Մարօն կատոի արագութեամբ դուրս թռաւ, եւ աներեւութացաւ գիշերային խաւարի մէջ: Մայրս չգիտէր՝ ծիծաղել թէ բարկանալ. նա ասաց ինձ, որ գնամ եւ այն «դեւի ծնունդինէ հասցնեմ իրանց տունը, չիցէ թէ ճանապարհին փորձանքի հանդիպի: Ես դուրս վազեցի, նա արդէն անհետացել էր, միայն փողոցում տեսայ մի ահագին կերպարանք, որին մօտեցաւ Մարօն: Դա նրա հայրն էր:

— Միթէ՞ կարելի է թողնել փոքրիկ աղջկան այս խաւարում, այս ձների մէջ, տնից դուրս գալ, — հարցրի նրանից:

— Թո՛ղ սովորէ՛... — պատասխանեց հայրը եւ հեռացաւ:

Այդ սառն եւ խստասիրտ պատասխանը ինձ խիստ օտարոտի երեւաց: Ի՞նչ պիտի սովորէր փոքրիկ աղջիկը: — Գիշերային փոթորիկի ժամանակ, ձիւնի եւ սառնամանիքի մէջ միայնակ ման գալ: Ես չէի հասկանում դրանում ինչ միտք կամ նպատակ կարող էր լինել: Այդ ինչ տարապայման կրթութիւն էր, որ խստասիրտ հայրը ցանկանում էր տալ մանկահասակ աղջկան: Մարօն առանց դրան եւս վայրենի բնաւորութիւն ունէր: Ամէն անգամ, երբ մեր տունն էր գալիս, առանց մէկին կծելու, առանց միւսին ճանկռե-